ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՇՆՈՐՀԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔ ԱԶԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՅ ԹՈՒՐՔԻՈՅ։

Գերապատիւ Արքեպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց, թեմական Առաջնորդաց, Վանահարց, Պատրիարքական և Առաջնորդական Փոխանորդաց, բարեխրատ Քարոզչաց, Հոգեւանդն Աւագերիցանց, Կարգապահ Քահանայից, Բարեշնորհ Սարկաւագաց, Փաղցրանուագ Դպրաց, Պատուաբժան անդամոց Դաւառական Ընդհանուր, Կրօնական և Քաղաքական Ժողովոց, Բարեջան Թաղական խորհրդոց, ջանասէր Հոգաբարձութեանց, բարենախանձ Դաստիարակաց և Ուսուցչաց, Կրթական և Բարեգործական Ընկերութեանց և համօրէն հաւատացելոց ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. Արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսանաց ողջոյն Տիրանուէր և օրհնութիւն Աստուածային։

Շնորհք, սէր, խաղաղութիւն և ողորմութիւն Ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ բազմասցի ի հոգիս և ի մարմինս հարազատ և լուսածընունդ որդւոյ Առաքելական Ուղղափառ Ս. Եկեղեցւոյս Հայաստանեայց հիմնելոյ յառաջին Լուսաւորչայն մերոյ Սրբազան Առաքելոցն, Թադէոսի և Բարդուղիմէոսի և ի սրբոյ հօրն մերոյ Գրիգորի երկրորդ Լուսաւորչին։

Յայտնի է Ձեզ, եղբարք և Որդիք իմ սիրելիք և անձկալիք, որ աղգային ընդհանուր ժողով իր միահամուռ քուէովն այս երկրորդ անգամ Թուրքիոյ Հայոց Պատրիարքական ծանրակիր պաշտօնին կոչեց զիս։ Թէպէտև ծեր և պարտասեալ, բայց իբրև ուխտադիր պաշտօնեայ Ս. Եկեղեցւոյ՝ կոչմանս իմ վրայ դրած պարտականութիւնը կատարելու և Ազգին օրինական կամքը յարգելու պարտաւոր՝ Աստուծոյ ողորմութեան ապաւինելով, ընդունեցի Պատրիարքական բազմապահանջ պաշտօնը։ Հարկ չկայ

ըսելու թէ բաղմադիմի են ազգին պէտքերը, որոնց հանդէպ շատ են և Պատրիարքական պաշտօնին պարտականութիւնները։ Այս պարտականութիւնները լիապէս կատարելու համար ինչպէս ըստ Ազգային սահմանադրութեան գործակից են ինձ և պատասխանատու Ազգային և Վարչական ժողովներն իրենց բոլոր ճիւղերով, նոյնպէս հարկ անհրաժեշտ է որ եկեղեցական ամէն կարգի և աստիճանի պաշտօնեայք և Թուրքիոյ համօրէն Հայ ժողովուրդը կատարեն իրենց նիւթական և բարոյական պարտականութիւններն աջակցելով ինձ, աջակցութիւն՝ պատկառ կենալով Հայաստանեաց Ուղղափառ Ս. Եկեղեցւոյ և կատարելով ազգային սահմանադրութեան իրենց վրայ դրած պարտականութիւնները։

Ապաքէն յայտնի է Ձեր ամենեցուն որ իբրև եպիսկոպոս ըստ իմ եկեղեցական ուխտին և իբրև Պատրիարք ըստ սահմանադրական ուխտին, պաշտօն և պարտականութիւն ունիմ մեր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ դաւանութիւնն և աւանդութիւններն անխախտ պահել, հոգ տանիլ եկեղեցեաց բարեզարդութեան, ամէն բարեպաշտական, կրթական, բարեգործական և այլ ազգօգուտ հաստատութեանց յարատև պայծառութեան և Ազգային ու Եկեղեցական իրաւանց անվթար պահպանութեան։

Եւ արդ լծակից եղբարք իմ, Դուք որ կարգեալ էք Տեսուչ և Հովիւ Ձեզ յանձնուած բանաւոր հօտին Քրիստոսի և Ուխտիս Սրբութեան, պարտաւորութիւն յանձն առած էք առաջի աչաւորին Աստուծոյ և հաւատացեալ մարդկան, հսկեցէք որ քրիստոնէական հաւատոյ աւանդն անարատ մնայ, հսկեցէք որ մեր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ Առաքելական կարգաց, ծիսից և աւանդութեանց մէջ նորաձեւութիւնք չսպրդին, հսկեցէք որ եկեղեցական ամէն պաշտամունք, երգեցողութիւնք և սրբազան խորհրդոց մատակարարութիւնք կատարուին Քրիստոնէական հաւատով, յուսով և սիրով, կատարուին ջերմառանդն սրտիւ, կատարուին Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ կարգաց և կանոնաց համաձայն, հսկեցէք որ Ձեզ ստորադասեալ

պաշտօնեայք՝ վարդապետք, քահանայք, սարկաւագունք և դպիրք սրբութեամբ և պարկեշտութեամբ քաղաքավարին և Քրիստոնէական հոգւով և զգացմամբ կատարեն իրենց պաշտօնը։ Ուշ դրէք ամենայն արթնութեամբ և մանրախոյզ քննութեամբ ընտրեցէք ձեռնադրութեան մատչողներն, որ եկեղեցատէր, անարատ և որչափ հնար է, դիտուն անձեր ըլլան, որպէս զի Հայ եկեղեցականութիւնն, ոչ սուրբ և ընտիր ըլլալ պէտք է, չկազմուի անարժաններէ, և այս մասին տիրած գայթակղութիւնք հետզհետէ բարձուին։

Քարոզեցէք և խրատեցէք որ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ որդիք սիրայօժար փութան ի կատարումն իրենց Քրիստոնէական պարտուց, ազգային պարտուց և մարդասիրական պարտուց, մխիթարեցէք վշտացեալ և բեկեալ սրտերը։ Հոգ և խնամ տարէք աղքատաց, աղքատ հիւանդաց, որբոց և այրեաց վիճակին բարւոքման և անոնց պիտոյից յանձանձման։ Հսկեցէք Հայ մանկտւոյն կրօնական, բարոյական և մտաւորական կրթութեան վրայ, քաջալերեցէք կրթութեան գործին յառաջացման համար ամէն հաստատութիւններն ու ձեռնարկները, և օգնեցէք անոնց այնու հաստատուն համոզմամբ թէ տգիտութիւնն աղբիւր է ամենայն չարեաց։

Ընտրելակից Եղբարք իմ՝ ի Տէր, կաղաչեմ զՁեզ, կատարենք այս ամէնն հոգւոյ բոլոր զօրութեամբ, մտաց բովանդակ կարողութեամբ և սրտի բոցավառ զգացմամբ, կատարեմք մեր ամէն պարտաւորութիւնները, զոյս ունիմք առ Ս. Եկեղեցին Հայաստանեայց և առ ազգն համօրէն, պատկառ կենանք եկեղեցական օրինաց և կարգաց և Ազգ. սահմանադրութեան. անվթար պահենք Ս. Եկեղեցւոյ և Ազգին անձեռնմխելի իրաւունքները մեր անձին իսկ զոհաբերութեամբ։ Եղբարք իմ, հեռի ի մէնջ փառասիրութիւն, հեռի ի մէնջ արծաթասիրութիւն որ ըստ առաքելոցն՝ է արմատ ամենայն չարեաց, հեռի ի մէնջ և անձնասիրութիւն։ Ապրինք Ս. Եկեղեցւոյ համար, զի մեր փառքն Եկեղեցւոյ շինութեան մէջ է, ապրինք Ազգին համար, զի Ազ-

գին պաշտօնեաներն ենք, այս կը պահանջէ մեր ուխտը զոր կատարած ենք առաջի Աստուծոյ, և մարդկան, երբ աշխարհէ հրաժարելով նուիրեցինք մեր կեանքն ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ։ Ցիշենք միշտ և կրենք մեր սրտի տախտակաց վրայ Սրբազան Առաքելոյն սա խրատն ու յորդորը, որ յաւիտեան ճշմարտութեան Ս. Հոգին քարոզել և գրել կուտար. «Ձերիցուն այսուհետև ազաչեմ՝ իբրև երիցակից՝ և վկայ չարչարանացն Քրիստոսի, որ և հանդերձեալ փառացն յայտնելոց հաղորդ։ Արածեցէք որ ի Ձեզ հօտդ է Աստուծոյ. վերակացու լինել՝ մի իբրև ակամայ՝ այլ կամաւ ըստ Աստուծոյ, մի զոչաքաշութեամբ, այլ յօժարութեամբ, մի իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին, զի յերևիլ Հովուապետին, ընդունիջիք զանթառամ փառացն պսակ» (Կաթուղիկեայց Պետրոս Ա. Գլ. Ե. 1 – 4)։

Վանքերն ու Դպրեվանքերն մեր անմահանուն նախնեաց հիմնած նուիրական հաստատութիւններն են, և սահմանուած՝ ոչ միայն աղօթատեղիներ, այլ և կրթարաններ և ուսումնարաններ ըլլալու, իրենց շուրջը բնակող բարեպաշտ ժողովրդեան Քրիստոնէական Ս. Կրօնի զգացումներն արծարծելու, անոնց զաւակները կրթելու, և ուսեալ ու բարեպաշտ կրօնաւորներ ու Ս. Եկեղեցւոյ պաշտօնեաներ և Ազգին ընտիր ընտիր անհատներ հայցնելու։ Ուստի յորդոր կկարդամ Դեր. Վանահարց և Վերակացու պաշտօնէից՝ քարոզելու հանապազ զբանն կենաց—Ս. Աւետարանն, ժողովրդեան կրօնական և բարեպաշտական զգացումները զարթուցանել ճշմարիտ հոգւով և կեանքով, օրինակ ըլլալ աղօթասիրութեան, սրբակեցութեան, ընթերցասիրութեան և առաքինի կենաց։ Նոյնպէս Ազգին կողմանէ սահմանեալ վանական կանոնաց անվիթար պահպանման և գործադրութեան հսկել, իմաստութեամբ անտեսել վանուց ելքն ու մուտքը, հաւատարմութեամբ պահպանել անոնց հողային և այլ ստացուածքներն ու գոյքերը, և զանոնք բարգաւաճ վիճակի մէջ պահել։

գիտնալով որ այս ամէնն Ազգին սեփականութիւններն են, Ս. Եկեղեցւոյ արժանաւոր վարդապետ ու քահանայ պաշտօնեաներ հասցնելու վաստակել. բաղդրութեամբ վարուիլ կրօնաւորաց հետ, զուարթ սրտիւ յանձանձել կրօնաւոր եղբարց անհրաժեշտ պէտքերն և մխիթարել ծերերը, հիւանդներն և անկարները, Եւ Ձեզ, սրբանուէր կրօնաւորք, կպատուիրեմ որ հանապազորդէք կրօնաւորական առաքինի կենաց մէջ, ինչպէս որ իւրաքանչիւր ոք ի Ձէնջ ուխտած է առաջի յաւիտենականին Աստուծոյ պատկառ կենալ վանական կանոնաց, հնազանդիլ վանահօր և գործակցիլ անոր ջանքերուն և եղբայրական սիրով ու համերաշխութեամբ աշխատիլ Ս. Մենաստանին նիւթական և բարոյական բարգաւաճման համար։

Կյորդորեմ՝ որ կենաց բանին քարոզիչներդ, որ հանապազ քարոզէք հաւատացելոց Քրիստոնէական հաւատքը, յոյսն և սէրը, քարոզէք Ս. Աւետարանն և Առաքելոց թղթերը, հեռւոզութեամբ և բացատրութեամբ մեր երանաշնորհ Ս. Հարց և Վարդապետաց։ Քարոզեցէք, եղբարք իմ, և ուսուցէք աղքատասիրական և մարդասիրական առաքինութիւնները, ուսուցէք Քրիստոնէական գործնական կեանքը, ուսուցէք հեռի մնալ ամէն տեսակ մոլութիւններէ, ուսուցէք մեր ուղղափառ Ս. Եկեղեցւոյ կեանքը, մեր առաքինի և երանաշնորհ նախնեաց կեանքը, յորդորեցէք, խրատեցէք որ մերձենան Յիսուսի Քրիստոսի Աստուածային անհուն սիրոյ սեղանոյն, ըսելով «Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է Տէր»։ քարոզեցէք վերջապէս և ուսուցէք զոր ինչ պատուիրեց մեզ Տէրն մեր։

Եղբարք իմ, աշխատեցէք Ձեր սահմանին մէջ Ձեր բովանդակ ուժով Հայ երկսեռ մանկաւոյն դաստիարակութեան և կրթութեան գործին, յորդորեցէք հայրերը ու մայրերն որ ճանչնան իրենց պարտականութիւններն իրենց որդւոյ կրթութեան և դաստիարակութեան մասին, գիտցուցէք թէ պատասխանատու կմնան առաջի Աստուծոյ և մարդկան, երբ իրենց զաւակները մնան թերուս, անկիրթ և ունենան անօգուտ կեանք մը թէ իրենց

անձանց, թէ իրենց ընտանեաց, թէ Եկեղեցւոյ, թէ Ազգին և թէ ընդհանուր մարդկային ընկերութեան համար։ Սորդորեցէք բոլոր Հայ քրիստոնեայ հաւատացեալներն և կոչում՝ ըրէք անոնց եկեղեցասիրական զգացմանց որ փութան սիրայօժար կատարելու առ Ազգն ու Եկեղեցին իրենց ունեցած նիւթական ու բարոյական պարտաւորութիւնները։ Քարոզեցէք և ուսուցէք ժողովրդեան ի գործ դնել այն ամէն միջոցները, որք կպահպանեն զիրենք բոլոր հոգեկան և մարմնական վնասներէ, ուսուցէք որ հետևին ամէն առողջապահիկ կանոնաց, ուսուցէք աշխատութիւնն և անոր օգուտներն և ծուլութեան աղետալի հետևանքները։ Սիրելիք իմ, իբրև Եկեղեցանուէր պաշտօնեայք հարկ անհրաժեշտ է որ մեր կոչման արժանի հանդիսանանք, ուսանելու պարապինք հանապազ, ջանանք ըլլանք որ գործովք ևս մեր անձանց վրայ ցուցնենք, ինչ որ բերնով կքարոզենք Աստուծոյ հօտին, զի մէկ բարի օրինակն հազար խօսք կարժէ հաւատացելոց, չըլլանք շատաշրջիկ և կենցաղավարութեան շարժմանց, գնացից և խօսից մէջ ամէն պարկեշտութիւն փայլեցնենք մեր վրայ, պէտք է որ հրաժարինք պչրանքէ և ազատեղութենէ. պարզ՝ սակայն և մաքուր հանդերձ բաւական է մեզ։

Պատուարժան դասք քահանայից, գիտէք որ քահանայն բարեպաշտ ժողովուրդեան առանին քարոզիչն է, անոր ցաւոց մխիթարիչը, վշտաց ամաքիչն, ամէն պարագայի մէջ անոր ուրախակիցն և տրտմակիցն է, և ի մի բան՝ անոր անբաժան ընկերը. մեծ և փափուկ է քահանայի պաշտօնը, և թէ ինչ երջանիկ է այն քահանայն, երբ իր սուրբ կոչման արժանի կեանքով, վարքով, բարքով, խօսքով, գործքով և իր ընտանեկան սրբութեամբ կը կատարէ քահանայական և տաներէցի պաշտօնը, և օրինակ կհանդիսանայ իր հօտին անտարակոյս այնպիսի կրկին պատուոյ արժանի կըլլայ ըստ Առաքելոյն, թէ սիրուելով յաշխարհի առ իր ժողովուրդէն, և թէ վարձատրուելով յերկինս ի ճշմարիտ Քահանայապետէն։ Քահանայ եղբարք, ցոյց տալով Ձեզ ձեր երկնային գործին զօրութիւնն

և մեծութիւնը, կնորդարեմ ամենքդ որ Ձեր քահանայա-
կան անուան և սուրբ կոչման համաձայն վարէք ձեր
պաշտօնը, մաքուր հոգւով, սուրբ սրտով, հաւատով, յոյ-
սով և սիրով մատակարարէք Ս. Եկեղեցւոյ փրկարար խոր-
հուրդները, երկիւղածութեամբ կատարէք ըստ իւրաքան-
չիւր ժամու սահմանեալ աղօթքներն և Ձեր ուրիշ ամէն
հոգևոր պաշտօնները, և ձեր մշտամուն և հոգեբուղխ
աղօթքով փառաւորէք զԱստուած և այնու զարթուցա-
նէք և արծարծէք ժողովուրդեան ջերմեռանդութիւնը։
Կյանձնարարենք ձեզ դատարկ ժամանակ չանցընել բնաւ,
պարապիլ միշտ ուսանելու Ս. Գիրքն և այլ օգտակար գի-
տելիքները, մեր Հայաստանեաց եկեղեցւոյ և Ազգին պատ-
մութիւնը։ Կպարտաւորեմ զձեզ ձեր սրբութեան (ժամա-
բարութեան) օրերուն մէջ հանապազ պարապիլ ընթերցման
և պատրաստել ձեր սիրտն ու հոգին՝ տուն և տեղի
շնորհաց ճշմարտութեան Ս. Հոգւոյն։ Կյանձնարարեմ
պատկառ կալ Ազգային հոգևորական վերին իշխանութեան
և անոր կողմէ կարգեալ վերադաս պաշտօնէից և ձեզ
ուանդուած պատուէրներն ու հրահանգները ճշդութեամբ
ի գործ դնել։

Կպատուիրեմ գրագրանուագ Գպրաց որ վերադաս
հոգևոր պաշտօնէից տուած հրահանգաց համաձայն բա-
րեպաշտական երկիւղածութեամբ կատարէք եկեղեցւոյ
մէջ ձեր պաշտօնն, որպէս զի անբասիր վարուք և հոգևոր
պաթաջանութեամբ արժանանաք մեծի շնորհացն Աստու-
ծոյ։

Իսկ, սիրելի ժողովուրդ, կյորդորեմ զՁեզ սիրոմբ
Յիսուսի, որ Ձեր բոլանդակ կենաց մէջ Ս. Գրոց Աստուա-
ծաւանդ պատուէրներ մատաղիւր լսէք և կատարէք ի փերբ-
կութիւն Ձեր հոգւոյց, սրբութեամբ պաշտէք զկենդանին
Աստուած, զնախախնամողն տիեզերաց։ Բարեպաշտ ժողո-
վուրդ, ամրապինդ պահեցէք Ձեր հայրենաւանդ սովորու-
թիւնները, սիրեցէք Հայաստանեայց Առաքելական Ս. Եկե-
ղեցին, որ մեր ազգային միութեան յոգակապն է, յաճա-
խեցէք ամենայն երկիւղածութեամբ ի տաճարն Աստուծոյ

կենդանւոյ, որ սրբութեան յարկ և փառաբանութեան տեղի է։ Միրեցէք խնամել աղքատներն, որբերն և տնանկները, ջանացէք բոլոր բարեպաշտական, կրթական և դիտաւորական հաստատութիւններն անկարօտ և վայելուչ վիճակի մէջ պահել ի փառս և ի պարծանս Ազգիս։

Մասնաւորելով խօսքս առ մարմնաւոր ծնողդ և պաշտպանդ որբոց՝ հայրաբար կյորդորեմ որ մեծ հոգ տանիք Ձեր որդւոց մտաւորական և բարոյական կրթութեան, և գիտցէք որ Ձեր զաւակաց կատարեալ կրթութիւնն ոչ միայն Եկեղեցւոյ և Ազգին մեծապէս օգտակար է, այլ և Ձեզ ծնողացդ թանկագին դանձ մ՝ է, ուստի մի խնայէք և ոչ մի ինչ վարժարանաց համար, որպէս զի աւելի ևս բարեկարգուին և Ձեր որդիք առաւելապէս օգտուին։ Գիտցէք նաև թէ ինչ և ո՞րքան կուսանին Ձենէ աշխարհի մէջ ապրելու եղանակն։ Ուստի լաւ համոզուեցէք որ Ձեր բարի խրատներէն աւելի Ձեր օրինակը շատ ազդու է անոնց աչքին. ջանացէք ուրեմն ընտանեկան առաքինութեամբ զարդանալ. փոխադարձ սէր, վստահութիւն, անկեղծութիւն և համեստութիւն Ձեր ընտանեկան կեանքին առանցքը թող ըլլան։ Գիտցէք որ երբ այսպէս շարունակէք Ձեր ամուսնական սուրբ կեանքը, այլևս անհաճոյ դէպքեր և քայքայիչ խնդիրներ շատ հեռի կմնան ընտանեկան յարկերէն։

Բարեպաշտուհի հայ կանայք, նոյնպէս և դուք դըլխաւոր բաժին ունիք ամուսնական կենաց սրբութեան, որպէս և Ձեր որդւոց կրթութեան և տան տնտեսութեան ի մասին։ Ուստի կյորդորեմ զՁեզ որ Ձեր, Հայ տիկնոջ այնքան յատուկ, զգաստ և համեստ կեանքով և համբերատար սգւով քաղցրացնէք ամուսնական կեանքը։ Կյորդորեմ նոյնպէս որ սիրէք պարզութիւնն, նոյն ընթացքին վարժեցնէք ձեր մանուկները, նամանաւանդ աղջիկ զաւակներն և դգուշացնէք զանոնք շռայլութենէ և պճնասիրութենէ։ Կյորդորեմ որ իբրև կին ժրագլուխ խնայողութեամբ տնտեսէք և յանձանձէք տան բոլոր պէտքերը, միշտ ի նկատի ունենալով ձեր սրանց նիւթական

և բարոյական վիճակը։ Պայմաններ են սոնք, որ միայն կրնան ազատական յարկը խաղաղ, երջանիկ և սուրբ պահել։ Կարտուիրեմ որ յարատևէք Հայ իգական սեռին ծանօթ բարեպաշտութեան և եկեղեցասիրութեան մէջ, և ինչպէս վարժեցնելով ձեր զաւակները, արժանի հանդիսանաք ձեր մայրական բարձր ու նուիրական կոչման։

Ազգին զաւակաց կրթութեան գործին նկատմամբ խօսելու առթիւ չէ կարելի մոռնալ ազգային կրթական գործին այնքան անձնուէր պաշտօնեաները։ Դուք, ուսուցիչք և ուսուցչուհիք, ուսուցէք Հայ երկսեռ զաւակաց իրենց մայրենի լեզուին, օսմաներէնն և այլ պէտքը ճանչցուած լեզուները։ Աւանդեցէք անոնց պատմական գիտութիւնները, իմաստասիրութիւնն և այլ գիտական ամէն կենցաղօգուտ գիտելիքները, ինչպէս և գեղարուեստն ու ձեռարուեստը։ Պատրաստեցէք Ազգին ու ընդհանուր մարդկային ընկերութեան համար իմացականութեամբ օժտուած և հաստատուն նկարագրով տոգորուած անհատներ, ինչ որ արդէն ձեր կէտ նպատակին և նուիրական պարտականութիւնն է։

Ի վերջոյ Պատուական ժողովուրդ Հայոց, գիտէք արդէն այն նուիրական օրը, նախընթաց տարւոյ Յուլիս 11ն երբ Թուրքիոյ միահեծան Կայսրութիւնը Սահմանադրական կառավարութեան վերածուեցաւ և այս հիմնական փոփոխութեամբ Ազատութիւն, Եղբայրակցութիւն, Հաւասարութիւն և Արդարութիւն հռչակուեցան։ Ազատութիւն՝ խօսելու գրելու, Եղբայրակցութիւն՝ Օսմանեան Սահմանադրական պետութիւնը կազմող բոլանդակ տարակրօն և տարաշեղու ցեղերուն մէջ՝ առանց կրօնի խտրութեան, Հաւասարութիւն այս ամէն տարբերուն՝ օրինաց առջև, Արդարութիւն՝ բոլոր Օսմանցիներու համար առանց խըտրական ոգւոյ։

Սահմանադրական այս ամէն իրաւանց վայելման հետ՝ պէտք է գիտնալ որ իբրև Օսմանեան քաղաքացիներ փոխադարձ պարտականութիւններ ալ ունինք։ Մենք Հայերս իբրև Օսմանեան պետութիւնը կազմող կարևոր տարրերէն

մէկը, սահմանադրութեան պարգեւած բարիքները վայելելու իրաւունքին հետ, պարտաւոր ենք մեզ բաժին ինկած օրինաց սահմանին մէջ և խղճի մտաք գործադրել, պահպանելու համար Օսմանեան սահմանադրութեան յարատեւ գոյութիւնը, որով միայն պիտի երաշխաւորուին ազատական սկզբունքներու անվթար կիրառումը, համերաշխ եղբայրակցութեան մշտատեւ շարունակութիւնը, հաւասարութեան իրական պահպանութիւնն և արդարութեան անվրէպ գործադրութիւնը, զգուշանալով ամին ամէն ծայրայեղութիւններէն, որոնք կրնան ՀԱՍԱՍԱԲԵՐ դառնալ և զրկել մեզ սահմանադրութեան ընծայելիք բարիքներէն։

Շնորհաւորելով Օսմանցի ամբողջ Հայերուն Սահմանադրութեան այս բարեբաստիկ թուականն և սահմանադրական օրինաց երջանկաբեր հրատարակութիւնը, կ՚աղօթեմ արտագին նախ այն ամէն Հայ և Թուրք հոգիներուն համար որք այս սահմանադրական կեանքը ձեռք բերելու համար դառնորէն նահատակուեցան, կաղօթեմ և ամէն անոնց կենաց համար, որք վերջապէս յաջողեցան ձեռք բերել սահմանադրութեան հրատարակումն և վերջ տալ բռնապետական աշխարհաւեր դրութեան, կաղօթեմ և արտագին որ Տիեզերաց հսկող Յաւիտենական Նախախնամութիւնը, որ առաջնորդեց իր աստուածային ողորմութեամբ այս ամէն գործողներուն, պահպանէ հաստատուն և անսասան բոլոր Օսմանցի ժողովուրդը, Օսմանեան Հայրենիքն և Օսմանեան սահմանադրական կառավարութիւնը։

Աղօթենք և խնդրենք արտաքուստ հառաչանօք՝ որ Բարձրեալն և ամենազօրմածն Աստուած շնորհէ բովանդակ աշխարհի խաղաղութիւն և անդորրութիւն։ Աղօթենք և խնդրենք որ ազգիւրն իմաստութեան և Սուրբ Հոգին շնորհաց ցօղէ մեզ Հոգի գիտութեան, Հոգի իմաստութեան, Հոգի հանճարոյ, Հոգի աստուածպաշտութեան, և առաջնորդէ զմեզ ի ճշմարիտն, ի բարին և յօգտակարն։ Աղօթենք և խնդրենք որ Մարգարէն Աստուած Հայոց Ազգն և Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին պահէ յամենայն չարէ։

Հուսկ ապա կ՚յիշեցնեմ Ձեզ ամենեցուն առաքելոյն սա խօսքը, Այսուհետև, եղբարք որ ինչ ճշմարտութեամբ է, որ ինչ պարկեշտութեամբ, որ ինչ արդարութեամբ, որ ինչ սրբութեամբ, որ ինչ սիրով, որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ քաջութեամբ, որ ինչ գովութեամբ, զայն խորհիջիք։ Զոր ուսարուքն և ընկալարուք և լուայք և տեսէք յիս, զայն արարէք, և Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ։ Ամէն։ (Փիլիպեցւոց Գլ. Դ. 8—10)։

ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔ. ԻԶՄԻՐԼԵԱՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈՅ

Տուաւ կոնդակս ի Պատրիարքարանէ Հայոց Կոստանդնուպոլսոյ ի 1 Յունուարի 1909 ամի շնորհաց եւ ի Տօնական Թուականին Տ. Ն. Ա.

ԹԻՒ 1